

**ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ ԱՐՏԱՅՈՒԿԱԾ ՄԻ
ՇԱՐՔ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԵԹՈԴԱՐԱ-
ՆԱԿԱՆ ՊԱՐԶԱՐԱՆՈՒՄՆԵՐ**

**METHODOLOGICAL NOTES OF A
NUMBER OF INDICATORS
PRESENTED IN THE HANDBOOK**

Ժողովածուի մեջ ներկայացված են 2003թ. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի ոլորտների վիճակը բնութագրող տվյալներ՝ նախորդ տարիների շարքերի համեմատությամբ:

Տրանսպորտը բովանդակում է ընդհանուր և ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակները:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տնտեսության ճյուղերի և բնակչության բեռների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման երթուղիներով ուղևորների փոխադրումները:

Ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տվյալ կազմակերպության բեռների փոխադրումները (ավտոմոբիլային տրանսպորտի համար՝ ավտոտրանսպորտային միջոցներով, երկաթուղային տրանսպորտի համար՝ ոչ ընդհանուր օգտագործման մերձատար ուղիներով), ինչպես նաև ավտոտրանսպորտով տվյալ կազմակերպության աշխատողների փոխադրումները (ներտնտեսական և ծառայողական տրանսպորտ):

Բեռնափոխադրումների ծավալը՝ փոխադրված բեռների փաստացի քանակը՝ հաշվի առնելով տարայի կամ կոնտեյների քաշը:

Բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետրերով) հաշվարկվում է փոխադրվող բեռների յուրաքանչյուր խմբի քաշի (տոննա) և այդ բեռնափոխադրման հեռավորության արտադրյալների հանրագումարով:

Ուղևորափոխադրումների ծավալը՝ փաստացի փոխադրված ուղևորների թվաքանակը (ներառյալ անվճար երթևեկության իրավունքներից օգտվող ուղևորները):

Ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետրերով) հաշվարկվում է փոխադրված ուղևորների թվաքանակի և երթուղու միջին հեռավորության արտադրյալների հանրագումարով:

Data characterizing state of transport and communications spheres of the Republic of Armenia for 2003 have been presented in the handbook in comparison with the series of the previous years.

Transport contains modes of general purpose and non-general purpose transport.

General purpose transport implements freights transportations of economy branches and population, as well as passenger transportations by public routes.

Non-general purpose transport implements freights transportations of own organization (for road transport by road transport means; for railway transport by non-public access ways), as well as transportations of employees of the given organization by road transport (intra-economic and service transport).

Volume of **freight transportations** is an actual number of transported freights, taking into account the weight of package or container.

Freight turnover (in ton-km) is calculated by summing up of products of each consignment weight in tons by the distance of its transportation in kilometers.

Volume of passenger transportations is a number of actually transported passengers (including passengers enjoying the rights to free travel).

Passenger turnover (in passenger-kilometers) is calculated by summing up of products of number of transported passengers by the average distance of transportation of one passenger.

Օդային տրանսպորտով կանոնավոր փոխադրումները պլանավորված չվացուցակով կատարված չվերթներն են (ներառյալ կանոնավոր չվերթների գերծանրաբեռնվածությամբ պայմանավորված լրացուցիչ չվերթները):

Օդային տրանսպորտով ոչ կանոնավոր փոխադրումները՝ պայմանագրային հիմունքներով կատարված առևտրային չվերթներն են:

Ավտոմոբիլային ճանապարհները դասակարգվում են.

-ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների,

-ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, որոնք ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականությունն են և օգտագործվում են նրանց ներտնտեսական, տեխնոլոգիական, ծառայողական, անձնական, ինչպես նաև այլ կարիքների համար:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներն ըստ նշանակության դասակարգվում են.

-միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, որոնք կապում են Հայաստանի Հանրապետության ճանապարհների ցանցն այլ պետությունների ճանապարհների ցանցին և ապահովում միջազգային տրանսպորտային կապերը,

-հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, որոնք կապում են մարզերի վարչական կենտրոնները և հանրապետության այլ քաղաքները հանրապետության մայրաքաղաքի ու միմյանց մշակութային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ճանապարհների հետ,

-տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, մարզերի վարչական կենտրոնների, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

Կապի ցանցը հաղորդագրության (տեղեկատվության) ընդունում, հանձնում և բաշխում (կոմուտացիա, տեսակավորում) իրականացնող

Regular carriages by air transport are flights implemented in accordance with the planned schedule (including over flights raised by overload of regular flights).

Non-regular (charter) carriages by air transport are commercial flights on the contract basis.

Motor roads are classified:

- **public roads**

-**non-public roads** that are a property of natural and legal persons and are used for their intra-economic, technological, service, personal, as well as other needs.

Public roads are classified by importance:

- **interstate public roads** that connect the road network of the Republic of Armenia with the road network of other countries and provide international transport connections,

- **republican public roads** that connect administrative centers of marzes and other cities of the republic with the capital of the republic and their cultural, spiritual centers and interstate public roads.

- **local public roads** that connect rural settlements of the republic with each other, administrative centers of marzes, other cities, republican and interstate roads.

Communication network is a population of enterprises, communication points implementing an acceptance, delivery and distribution (switching, sorting) of messages (information), as well as

կապի կազմակերպությունների, կետերի, ինչպես նաև հաղորդումն ապահովող կապի գծերի կամ կապուղիների ամբողջությունն է: Կախված կապի տեսակից, տարբերում են *փոստային կապի ցանց* փոստային առաքումներ և պարբերական հրատարակությունների փոխանցում ու ընդունում, և *էլեկտրակապի ցանց*՝ մեկ կամ մի քանի տեսակի փոխանցումներ (հեռախոսային, հեռագրային և ֆաքսիմիլային փոխանցումներ, փոխանցումներ կոմուտացիոն համակարգերից, էլեկտրոնային փոստ, հեռուստատեսային, ձայնային և այլ տեսակի ռադիո ու լարային հեռարձակման փոխանցումներ և այլն) ապահովող տեխնիկական համակարգեր:

Կապի միջոցներ տեխնիկական միջոցներ, որոնք օգտագործվում են էլեկտրակապի հաղորդագրությունների կամ փոստային առաքումների կազմավորման, վերամշակման, ընդունման և փոխանցման համար:

Փոստային կապ փոստային առաքումների ընդունում, մշակում, փոխադրում և տեղ հասցնում, ինչպես նաև պարբերական հրատարակումների առաքում, հասցնում ու տարածում:

Հեռագրային կապ հեռագրերի, լուսահեռագրերի հաղորդում ու տեղ հասցնում, խոսակցությունների ապահովում բաժանորդագրային հեռագրատան միջոցով, տվյալների և թերթային էջերի հաղորդում:

Հեռախոսային կապ ներհանրապետական (միջքաղաքային), միջազգային և տեղական (քաղաքային և գյուղական) հեռախոսային խոսակցությունների իրականացման ապահովում, հեռախոսային կապուղիներով տվյալների հաղորդման կազմակերպում:

Բջջային կապ՝ ռադիոհեռախոսային կապի շարժական համակարգ:

communication lines or channels providing a transmission of messages. Depending on communication types there are *post communication network* that is post consignments and transmission and acceptance of periodicals, and *telecommunication network* that are technical systems providing one or several types of transmissions (telephone, telegraph and fax transmissions, transmissions from switching systems, e-mail, television, sound and other types of radio and wire broadcasting transmissions, etc.).

Communication means are technical means that are used for formation, processing, acceptance and transmission of telecommunication messages or post consignments.

Post communication is an acceptance, processing, transmission and delivery of post items, as well as consignment, delivery and distribution of periodicals.

Telegraph communication is a transmission and delivery of telegrams, photo telegrams, provision of calls through the subscription telegraph office, data and newspapers transmission.

Telephone communication is a provision of inter-republican (intercity), international and local (urban and rural) telephone calls implementation, organization of data transmission by telephone channels.

Cellular communication is a mobile system of radiophone communication.